ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 16 հուլիսի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Ա. Պետրոսյանի
Մ. Թոփուզյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Էդուարդ Խաչիկյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Էդուարդ Խաչիկյանը 25.06.2013թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերով սահմանված՝ «սպանալը հավասարող փաստաթղթերը» դրույթի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջներին:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը սահմանափակում է անձի դատական, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, եւ անձը լիովին զրկվում է իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելուց:

Ըստ դիմողի՝ ստեղծվում է մի իրավիճակ, որի պայմաններում անձը զրկվում է արդար դատաքննության, արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքի իրականացումից, եթե անձն ինչ-ինչ պատճառներով չի կցել հայցադիմումին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերից որեւէ մեկը:

Անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներից պարզվեց, որ դիմումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է քննության, քանի որ.

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Դատական կազմը միաժամանակ գտնում է, որ առկա են դիմողի միջնորդությունը՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ, բավարարելու օրենքով սահմանված հիմքերը՝ ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի գ) մասով:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Յ.

1. Քաղաքացի Էդուարդ Խաչիկյանի անհատական դիմումով գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

16 հուլիսի 2013 թվականի
ՍԴԴԿՈ / 2-20